յօդուածի մը պատճառաւ տաճիկ պաշտօնեաներէ գանակոծուած և ծեծի հետևանքով երկու ամիս վերջ նահատակուած է 1876 Դեկտ. 14ին եւ թաղուած է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բակը։

ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԴԱՑԸԳՃԻԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Մբ. հայրը Աւետիս, մայրը Նունիկ. Ծ. 1861ին. աւագանի անունը Պետրոս. աշկ. Ժառ. վարժ.ի (1876-1880). Զռ. 1886ին. օգնական հաշուակալի 1883ին, հաշուակալ (1885—1895). ՏՊ. (1895—1901). ՏՑՊ. (1901—1905). Տեսուչ ելևմտից (1905—1910). Տեսուչ Դահիրէի կալուածներուն (1910—14). Բ. անգամ Տեսուչ ելևմտից (1914—16). ՏՀ. (1917—1923). Դ. անգամ Տեսուչ ելևմտից և անգամ ՏՆ. ժողովի 1921 ին. 1924 ին եպս. կը ձեռնադրուի։ Մեկենաս եղած է Օրմանեան Սրբազանի Խոհ եւ Խոսք երկասիրութեան։ 1927ին կ'ստանձնէ նաև Ս. Յակոբի վանքին կալուածոց տեսչութիւնը և կը վարէ ցայժմ։

ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ՆԱԶԱՐԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Մբ. Զռ. 1866 ին. թարգման Ս. Յակոբի վանքին. Ա.ռ. Տրապիզոնի (1871—84). կը ձեռնադրուի եպս. 1879ին. օժանդակութեամբ Մհտ. Սիմոն Ֆէթվաճիեանի (✻ 1900) կը վերաշինէ Տրապիզոնի առաջնորդարանը յարակից խանութներով, ինչպէս նաև աղջկանց վարժարանը։ Կը վախճանի 1884ին։

ՄԱՏԹԷՈՍ ԿԹՂ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Ծ. 1845 ին. աշկ. Մայր-վարժարանին Գումգափուի. Զռ. 1869 ին. քարտուղար Ազգ. Պատրիարքարանի, Խրիմեան պտրք.ի օրով. 1876ին կը ձեռնադրուի եպս., Բրիստոստուր Ղազարոսեանի հետ պատուիրակ Պուրսայի. Պերլինի վեհաժողովին առթիւ Ազգ. Պատուիրակ Գէորգ Դ. կաթողիկոսին մօտ Էջմիածին 1878 ին։ Պտրք.ի խորհրդական 1879 ին. Ա.ռ. Եգիպտոսի (1886—1891). 1885 ին Գէորգ Փանոսեանի հետ կ'ընկերանայ Եսայի Դ. պատրիարքին Երուսաղէմ վերադառնալու առթիւ և միևնոյն ատեն իբրև հրաւիրակ՝ նորընտիր Յարութիւն պտրք. Վեհապետեանը Պոլիս առաջնորդելու համար. ՊԿ. (1894—96). քաղաքական դէպքերու հետևանքով կը տարագրուի Ս. Յակոբի վանքը ու հոն կը մնայ իբր հիւր (1896 — 1908). 1908 ին մեծ շքով ու ժողովրդային խանդավառութեամբ կը վերադառնայ Պոլիս։